ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/189

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ՝ Վ. Բաբայանի,
«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կենցաղային և հիգիենիկ նյութերի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11529-2021 գրությամբ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.07.2021թ. թիվ 3/27/44751-21 գրության հիման վրա, 16.07.2021թ.-ին «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 16.07.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձը 19.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/189 համարի ծածկագիրը:

23.07.2021թ.-ին, 04.08.2021թ.-ին և 06.08.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 04.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.08.2021թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 12.07.2021թ. թիվ 3/27/44751-21 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ոստիկանության և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10 մայիսի 2021թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41/1 ծածկագրով կենցաղային և հիգիենիկ նյութերի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Սոֆթ Թրեյդ ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք Ձեզ ձեռնարկել միջոցներ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ մոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 20.07.2021թ.-ին գրությամբ դիմել է «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11529-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել 1 հրավիրված նիստին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը 22.07.2021թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ԼՕ-2021/189 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության պահանջը «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությանը (այսուհետ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այսինքն պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման և պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման միաժամանակյա առկայության դեպքում նոր կարելի է փաստել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի մասին: Ի դեպ նշված իրավակարգավորումը ինքնանպատակ չէ, այն ուղղված է կարգավորելու երկկողմ շահերը՝ պատվիրատուի և մասնակցի և դրանց համադրության համատեքստում նոր միայն հնարավոր է արձանագրել կիրառելի իրավական նորմերի մասին:

Ուստի գտնում եմ, որ սույն գործով պարզաբանման է ենթակա հետևյալ հարցադրումը.

Արդյո՞ք «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը խախտել է կողմերի միջև 10.05.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՅԱՂ-41/1» պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը՝ թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41/1» պայմանագրի (այսուհետ նաև պայմանագիր) շրջանակում Ընկերությունը մատակարարել է կենցաղային և հիգիենիկ նյութեր, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում՝ 2021 թվականի հունիսի 15-ին, որը ապացուցվում է կիս ներկայացվող հանձնման-ընդունման վերաբերյալ արձանագրությունով (այսուհետ նաև արձանագրություն): Ընդ որում Ընկերությունը ապրանքների մատակարարման վերաբերյալ 15.06.2021 թվականին դուրս է գրել թիվ U9105155078 հարկային հաշիվը: Պատվիրատուին ապրանքները մատակարարելու վերաբերյալ կնքված հանձնման-ընդունման ակտը հանձնելուց հետո, 15 աշխատանքային օրվա ժամկետում չի կազմել բացասական եզրակացություն:

Պատվիրատուն մատակարարված ապրանքները չի ընդունել այն պատճառաբանությամբ, որ իբր չեն համապատասխանում կողմերի միջև կնքված պայմանագրի տեխնիկական բնութագրին:

Պատվիրատուն զրկված չէր մատակարարված ապրանքները ներկայացնելու փորձաքննության այդ մասով ծագած խնդիրը պարզաբանելու և նոր միայն իրավաչափ վարքագծի արդյունքում փաստելու ապրանքի որակի համապատասխանության հարցը:

Ամփոփելով վերոգրյալը պետք է փաստել, որ որևէ փաստաթղթով չի հիմնավորվում մատակարարի կողմից պայմանագրի տեխնիկական բնութագրին:

Ընդ որում Պատվիրատուն չընդունելով 15.06.2021 թվականին Մատակարարի կողմից մատակարարված ապրանքները, անհասկանալի հանձնաժողովի կողմից է փաստել այդ հանգամանքը և որևէ կերպ հիմնավորված չէ թե այդ հանձնաժողովը ինչ լիազորությունների շրջանակում է իրավաու եղել գնահատելու ապարանքի որակը և արդյոք ունեցել է համապատասխան մասնագիտական գիտելիքներ, ընդ որում մատակարարի ապրանքները առաքող անձի ստորագրելը այդ արձանագրության տակ առավել քան ոչ իրավաչափ է, քանզի նա նման լիազորություններ չուներ և չէր էլ կարող այդ մասով գործել «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության անունից:

Ուստի պատասխանելով պարզաբանման ենթակա այն հարցադրմանը, թե՞ արդյոք «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը խախտել է կողմերի միջև 10.05.2021 թվականին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41/1» պայմանագրով նախատեսված պարտավորությունները, պետք է արձանագրել, որ առկա չէ անպատշաճ որակի ապրանք մատակարարելու վերաբերյալ որևէ ապացույց, ուստի պայմանագիրը լուծվել է ոչ իրավաչափ:

Իսկ գործող օրենսդրական կարգի համաձայն՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, որպես պարտադիր վավերապայման Օրենսդիրը նախատեսել է պայմանագրով նախատեսված խախտման փաստը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Սույն դեպքում պայմանագրով նախատեսված ենթադրյալ խախտումը վերաբերվում է անպատշաճ որակի ապրանքի մատակարարմանը, որը չի հիմնավորվում որևէ փաստաթղթով, ուստի պայմանագրի միակողմանի լուծումը չի բխում գործող օրենսդրությունից և պայմանագրից և կատարվել է ոչ իրավաչափ գործողության արդյունքում Պատվիրատուի սուբյեկտիվ ակնհայտ անհիմն վերլուծություն արդյունքում:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Մասնակիցը 28.07.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշման լրացմամբ հավելել է նաև հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ԼՕ-2021/189 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ հրավիրված նիստի ընթացքում Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց մի շարք փաստական հանգամանքներ, որոնք ինքնին վկայեցին կողմերի միջև ծագած վեճի և ոչ իրավաչափ փարաձայնությունների մասին: Մասնավորապես Պատվիրատուի ներկայացուցիչը կարևորեց այն հանգամանքը, որ Մատակարարի կողմից մատակարարված ապրանքների հետ միասին ներկայացվող փաստաթղթերը կազմված էին սխալ և հասցեագրված չէին իրավասու անձին, որով պայմանավորված կողմերի միջև ծագել էր վեճ, և որ Մատակարարի ներկայացուցչին պահանջ էր ներկայացվել ճիշտ կազմել փաստաթղթերը և կրկին մատակարարել ապրանքները, իսկ ինչ վերաբերվում է մատակարարված ապրանքների որակին, ապա այդ հանգամանքի ապացուցման նպատակով ներկայացվեց համացանցին արտատպված ինչ որ փաստաթուղթ և իպատասխան իմ հարցադրմանը հայտնեց, որ դա մատակարարված ապրանքից կատարված լուսանկար է, որը ըստ էության ճիշտ տեղեկատվություն չէր:

Նշվածի համատեքստում փաստվում է այն հանգամանքը, որ ըստ էության մատակարարված ապրանքների որակի վերաբերյալ որևէ փաստաթուղթ Պատվիրատուն չունենալով չի ընդունել ապրանքները պայմանավորված ներկայացվող փաստաթղթերում հասցեատիրոջ սխալ անուն նշված լինելու հանգամանքով:

Ինչ վերաբերվում է ապրանքների մատակարարման համար լրացուցիչ ժամկետ սահմանելուն և այդ մասին Պատվիրատուին ծանուցելուն հայտնեմ, որ այդ մասով որևէ ապացույց չներկայացվեց, իսկ դրա մասին այլ անձի ծանուցելը չի կարող դիտարկվել պատշաճ ապացույց պայմանավորված այն հանգամանքով, որ այդ անձը նման լիազորություններ չուներ:

Ընդ որում ապրանքների մատակարարմանն անդրադառնալով Պատվիրատուն հայտնեց, որ այն կարող էր առաքվել մինչև սույն ընթացակարգի շրջանակում հրավիրված նիստի օրը, իսկ այնուհետ չառարկեց ապրանքների մատակարարման մասին, ի սկզբանե հակված չլինելով չմատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները հայտնում եմ որ Ընկերությունը պատրաստ է մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները նույնիսկ այս պահին, եթե հնարավոր է: Մատակարարը կարող է մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները Պատվիրատուի կողմից այդ մասին ծանուցում ստանաուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Ուստի խնդրում եմ նշված հանգամանքները նույնպես կարևորել և առաջնորդվելով նաև ներկայացված դիրքորոշումներով խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության՝ «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ նախաձեռնված ընթացակարգը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/189 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.05.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո 2-րդ եռամյակի ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ.-ը:

iv. 15.06.2021թ.-ին հանձնման-ընդունման վերաբերյալ կազմված արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) համաձայն՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները չեն համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրին: Ինչով պայմանավորված տրամադրվել է 15-օրյա ժամկետ՝ ապրանքները համապատասխան չափանիշներով մատակարարելու համար:

v. Արձանագրությունը կազմվել և ստորագրվել է ՀՀ ոստիկանության ՏՎ ներկայացուցիչ Ա. Արտեմյանի կողմից, ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ ներկայացուցիչներ՝ Գ. Հայրապետյանի, Գ. Դանիելյանի, Ա. Գրիգորյանի և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի ապրանքը մատակարարող Մ. Հովակիմյանի ներկայությամբ:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 12.07.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 12.07.2021թ.-ի թիվ 12/813 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10 մայիսի 2021թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41/1» ծածկագրով կենցաղային և հիգիենիկ նյութերի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել: Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «ա» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.8-րդ կետը ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծել է ՀՀ ոստիկանության և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.05.2021թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41/1» ծածկագրով Պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11529-2021 գրությամբ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանա-տվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 110-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման

արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն.

3) եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ոստիկանության կարիքների համար կենցաղային և հիգիենիկ նյութերի մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց

փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ

հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.05.2021թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո 2-րդ եռամյակի ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ.-ը: 15.06.2021թ.-ին հանձնման-ընդունման վերաբերյալ կազմված արձանագրությամբ արձանագրվել է, որ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները չեն համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրին: Ինչով պայմանավորված տրամադրվել է 15-օրյա ժամկետ՝ ապրանքները համապատասխան չափանիշներով մատակարարելու համար: Արձանագրությունը կազմվել և ստորագրվել է ՀՀ ոստիկանության ՏՎ ներկայացուցիչ Ա. Արտեմյանի կողմից, ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ ներկայացուցիչներ՝ Գ. Հայրապետյանի, Գ. Դանիելյանի, Ա. Գրիգորյանի և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի ապրանքը մատակարարող Մ. Հովակիմյանի ներկայությամբ:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 12.07.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 12.07.2021թ.-ի թիվ 12/813 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10 մայիսի 2021թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊՊԳՎ/ԿԵՆՑԱՂ-41/1» ծածկագրով կենցաղային և հիգիենիկ նյութերի գնման պայմանագրի շրջանակներում «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել: Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «ա» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

Վերոգրյալ իրավական ու փաստական հանգամանքների հիման վրա, ուսումնասիրելով 15.06.2021թ.-ին կազմված Արձանագրությունը՝ Բողոքներ քննող անձն փաստում է, որ Պայմանագրի Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի ոչ լիարժեք գործողությունների արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար: Արձանագրությամբ նշվել է, որ մատակարարված ապրանքները մի քանի կետերով չեն համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրերին, այն դեպքում, երբ հստակեցված չէ, թե բնութագրի կոնկրետ որ չափորաշիչներին չեն համապատասխանում: Այլ կերպ ասած՝ Մասնակիցը ինչպիսի անհամապատասխանություններ պետք է վերացնի: Այս փաստի առկայության պարագայում միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ, իր հերթին, կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց

հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11529-2021 գրությամբ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/189 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**